Իր հերթին պրն. Լազոշը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար Վեհափառ Հայրապետին փոխանցեց պատգամավորական բարեկամության խմբի անդամների ողջույններն ու հարգանքը: Խմբի նախագահն անդրադարձավ նաեւ հայ ժողովրդի կապվածությանը Հայոց Եկեղեցուն, ինչը լավագույնս նկատելի է ֆրանսահայ համայնքում:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ Հայոց Ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման կարեւորության մասին, որպեսզի մարդկային կյանքում այլեւս տեղ չգտնեն եւ կանխարգելվեն նման երեւույթները: Անդրադարձ կատարվեց նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին եւ ԵԱՀԿ Մինսկի խմբում Ֆրանսիայի կարեւոր մասնակցությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ԺՈՒԿՈՎԻՆ

Հուլիսի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռուսաստանի Դաշնության փոխվարչապետ Ալեքսանդր Ժուկովի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Առողջապահության նախարար Հարություն Քուշկյանի:

Ողջունելով ՌԴ փոխվարչապետին եւ կարեւորելով նրա այցն ամենայն հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկկողմ հարաբերությունների առավել սերտացման եւ նորանոր ոլորտներում ձեւավորվող համագործակցության առիթով, հաջողություն մաղթեց Ա. Ժուկովի առաքելությանը Հայաստանում:

Վեհափառ Հայրապետը նաեւ գնահատանքով անդրադարձավ ՌԴ իշխանությունների՝ ռուսաստանաբնակ հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքին, ինչպես նաեւ հայորդիների բերած կարեւոր ներդրմանը երկրի՝ տնտեսական եւ մշակութային կյանքում:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց երկու ժողովուրդների բազմադարյա բարեկամությանը, Հայ եւ Ռուս Եկեղեցիների ջերմ հարաբերություններին եւ հոգեւոր առաքելության իրագործմանն երկու ժողովուրդների կյանքում:

Հանդիպմանը ներկա էր Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ